Լուսինե Կարապետի Ներսիսյանի սնանկության գործով գույքը հրապարակային կրկնակի սակարկություններով վաճառելու մասին

2026-10-19 09:12:35

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

Լուսինե Կարապետի Ներսիսյանի սնանկության գործով 29.09.2026թ-ին անցկացված գույքի աճուրդային վաճառքը կայացել էր, որի ժամանակ աճուրդում հաղթողի հետ կնքվել էր արձանագրություն վաճառքի ներկայացված թիվ 1 լոտի անշարժ գույքի վաճառքի մասին: Արձանագրության համաձայն՝ գնորդի կողմից անշարժ գույքի ամբողջական արժեքի վճարում պետք է կատարվեր 10 օրվա ընթացքում, սակայն արձանագրությամբ սահմանված ժամկետում գույքի ամբողջական արժեքի վճարում չէր կատարվել սնանկության հաշվին, ուստի գույքի վաճառքի վերաբերյալ արձանագրությունն իմ կողմից հայտարարվել է չեղարկված:
06.11.2026թ ժամը 15:00-ին սնանկության գործով կառավարիչ Հենրիկ Մարտիկյանի կողմից ք. երևան, Արշակունյաց պողոտա 5 շենք հասցեում կանցկացվի Լուսինե Կարապետի Ներսիսյանի թիվ ՍնԴ/0498/04/25 սնանկության գործով պարտապանին սեփականության իրավունքով և պարտապան չհանդիսացող երրորդ անձին պատկանող անշարժ գույքերի բաց դասական եղանակով աճուրդ-վաճառքը՝՝ նախկինի մեկնարկային գնով՝ հետևյալ լոտերով.
ԼՈՏ 1. Աճուրդի է դրվում Արարատի մարզի Վեդի համայնք, Գոռավան գյուղ, Տիգրան Մեծի 13 հասցեում գտնվող ՝ 03-031-0009-0007 կադաստրային ծածկագրով 0.2180 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, որի վրա կառուցված են՝ 150.35քմ մակերեսով մեկ հարկանի բնակելի տուն, 32.8 քմ մակերեսով նավես, նկուղ՝ 38,6 քմ, հիմք՝ 40,0քմ, զուգարան՝ 2,6 քմ, կաթսայատուն՝ 8,0քմ, ավտոտնակ՝ 21,2քմ, հավաբուն՝ 16,2քմ, առկա են փոփոխություններ՝ հավաբուն՝ 17,1քմ, գոմ՝ 88,9քմ, զուգարան՝ 2,3քմ, պարիսպ՝ 14,5քմ, պարիսպ՝ 13,7 քմ: Բնակելի տան ընդհանուր տեխնիկական վիճակը՝ միջինից բարձր, արտաքին պատերի շարը իրականացված է քարով, հարդարումը՝ սվաղած, տանիքը՝ ասբոշիֆեր: Շինության կառուցման տարեթիվը՝ 1980-ական թթ: Պատուհանները՝ մետաղապլաստե, միջսենյակային դռները՝ փայտյա, սենյակների հատակը փայտյա, պատերը և առաստաղը՝ ներկած: Անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է պարտապան չհանդիսացող երրորդ

անձ Անդրանիկ Շահենի Հայրապետյանին /սեփ. իրավունքի վկայական N 2225897, գրանցված 22.12.2006թ-ին, պայմնագիր՝ թիվ 3276/, և Լուսինե Կարապետի Ներսիսյանի վարկային պարտավորությունների դիմաց գրավադրված է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում: Լոտի մեկնարկային գինը՝ 9.440.150 ՀՀ դրամ:
ԼՈՏ 2. 03-031-0249-0211 կադաստրային ծածկագրով 10,0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք Արարատի մարզ, Վեդի համայնք, Գոռավան գյուղում, սեփականատեր՝ Լուսինե Կարապետի Ներսիսյան /սեփ. իր. վկ. № 24102014-03-0047, տրվ. 24.10.2014թ-ին, առուվաճառքի պայմանագիր՝ 01.10.2014թ թիվ ս/մ 2714/: Անխնամ հող, ենթակա է մելորացման: Լոտի մեկնարկային գինը՝ 13.000.120 ՀՀ դրամ:
ԼՈՏ 3. 03-031-0135-0005 կադաստրային ծածկագրով 0,281 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խաղողի այգի Արարատի մարզ, Վեդի համայնքի Գոռավան գյուղում: Սեփականատեր՝ Լուսինե Կարապետի Ներսիսյան /սեփ. իր. վկ. № 19062014-03-0030, տրվ. 19.06.2014թ-ին/: Լոտի մեկնարկային գինը՝ 551,010 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է՝
աճուրդին մասնակցել ցանկացողները, ինչպես նաև աճուրդի մասնակից չհամարվող անձինք սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ այն է. ո՛չ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ, կարող են հայտ ներկայացնել, իսկ աճուրդի մասնակից չհամարվող անձինք՝ ծանուցում ներկայացնել ՀՀ սնանկության դատարան՝ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով: Հայտին կից ներկայացվում է աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարման անդորրագրերը, ֆիզիկական անձինք՝ նաև իրենց անձնագրի պատճենը, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերը՝ նաև իրենց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները:
Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել, քան 200.000,0 ՀՀ դրամ), իսկ նախավճարը՝ 5%-ի չափով, մինչև հայտի ներկայացման պահը պետք է վճարվեն պարտապան Լուսինե Կարապետի Ներսիսյանի սնանկության հատուկ դրամային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ի Վեդու մ/ճ, հ/հ 2477605719570006)՝ որպես ստացող նշելով պարտապանին: Աճուրդի մասնակից չհամարվող անձինք, բացառությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչների, աճուրդին ներկա գտնվելու համար վճարում են 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամի չափով մուտքի վճար: Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի անցկացման և աճուրդի արդյունքներով պայմանավորված հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով, որը համարվում է աճուրդի կանոնակարգ:

Աճուրդի նախատեսված օրը կարող է փոխվել և հետաձգվել՝ այդ մասին աճուրդի կայանալուց ոչ պակաս երեք օր առաջ կատարելով համապատասխան հայտարարություն:
Աճուրդի մասնակցության վճարը նախատեսված է աճուրդների աշխատանքների կազմակերպման համար և չի մտնում պարտավորությունների մարման նպատակով բաշխման ենթակա գույքի արժեքի մեջ:
Եթե լոտերի թիվը մեկից ավելի է, ապա դրանց աճուրդները կազմակերպվում են շարադրված հերթականությամբ: Լոտի աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդի հաղթողը (այդ թվում՝ հարկային գործակալը) լոտի վաճառքի գինը պարտավոր է ամբողջությամբ վճարել աճուրդի օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում: Աճուրդ-վաճառքի ընթացքը տեսաձայնագրվում է:
Եթե լոտը իրավաբանական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գինը ներառում են նաև հարկերը, իսկ եթե ֆիզիկական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գնի մեջ չեն ներառվում հարկային գործակալների կողմից վճարման ենթակա հարկերը:
Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և առուվաճառքի պայմանագրից բխող բոլոր այլ (ցանկացած տեսակի) ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից:
Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 7 (յոթ) օրերի ընթացքում, աշխատանքային օրերին և ժամերին՝ նախապես պայմանավորվելով կառավարչի հետ: Կառավարչի հետ պայմանավորվելու, լոտերի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցով կարող եք փոստով (հասցեն՝ Արարատի մարզ, գ. Գոռավան, Պ. Սևակի 3, հեռ. 094 348664) կամ էլեկտրոնային փոստով (henrik.martikyan@mail.ru) նամակ գրել սնանկության գործով կառավարչ Հ. Մարտիկյանին:

37494348664

henrik.martikyan@mail.ru

-